

ու Եղիազարին կը ղրկէ այդ գիրին սեագրութիւնը, զոր կը կարդայ նաեւ Երեմիա, ու երեան կ'ելլէ այդ կոնդակին կեղծ ըլլալը, պատրաստուած Կ. Պօլսոյ մէջ՝ Մուղնեցիի ու իր արբանեակներուն կողմէ: Վերջիններուս մէջ գլխաւոր գերակատարներ էին համանուն երեք Աստուածատուր քահանաները (Թըլթըլ, Քեօր և Պարմախսուզ), Զաքարիա զալֆա և Սասգիւղցի Յակոբ ազգեցիկ ազգայինները և ուրիշ երէցներ ու աշխարհականներ. ետքէն ասոնց վրայ կ'աւելնայ Ճէհէննէմ նէրաիվէնի կոչուած Անյրէաս երէց: Այնուհետեւ երկու հակամարտ կողմերը բացորոշ գիրք կը բռնեն իրարու դէմ և բուն թափով կը ձգնին զիրար յազթահարել, թէև Եղիազար և Մուղնեցի Սեպտ. 26ին առերես հաշտուած էին միմեանց հետ:

Յակոբ կաթողիկոսի իսկական առաջին կոնդակը կը հասնի Հոկտ. 26ին: Անոր մէջ գրուած էր. «Եթէ Փիլիպպոս կաթողիկոսի կարգած առաջնորդը չէք ուզեր, զով որ ուզէք՝ զայն ղգկեմ ձեզ»: Յակոբ կաթողիկոսի այս գիրին հասնելէն հինգ օր վերջ, Նոյ. 5ին, Եղիազար վարդապետ կ'երթայ Պրուսա⁽¹⁾:

Այդ օրերուն Կ. Պոլիս հասած էր Երուսաղէմի Աստուածատուր պատրիարքի աշակերտ Մարտիրոս վրդ. Ղրիմեցի, որ զօրաւոր նեցուկ մը պիտի հանդիսանար Եղիազարի ու իր կուսակիցներուն: Արդարեւ շատ չանցած Ղրիմեցի եկեղեցիներու մէջ իր ճարտարաբան քարոզներով կը գրգռէ Ժողովուրդը Մուղնեցիին դէմ: Անկէ վերջ կագ ու կուռներն ու վէճերը այնքան կը սաստկանան, որ Մուղնեցիի կողմակից-

(1) 1655 Դեկտ. 29-30 լուսնալու գիշերը կը վախճանի Տէր Մարտիրոս Քէօմիւրճեանի մայրը և յուզարկաւորութիւնը կը կատարուի Պալատի Ս. Հրէշտակապետ եկեղեցին (Օրագր. էջ 102):